



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 22 ԱՊՐԻԼ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՏՈՍ 14

ՄԱՐԴՈՑ ԶԱՐՈՒԹԻԻՆՆԸ

Անմիտ մարդիկ իրենց մտքին մէջ ըսին. «Աստուած չկայ», ուստի ապականեցան եւ զգուելի արարքներու մէջ ինկան.

չկայ մէկը որ բարին գործէ:

Տէրը երկինքէն կը նայի մարդոց,

տեսնելու համար թէ կա՞յ արդեօք իմաստուն մարդ մը,

որ Աստուծոյ դառնայ:

Ամէնքն ալ խոտորեցան եւ մոլութեանց գիրկը ինկան.

չկայ մէկը որ բարին գործէ. չկայ մէկը, ո՛չ իսկ մէկը:

Երբեք իսելֆի պիտի չգա՞ն բոլոր անոնք՝ որոնք չարիք կը գործեն.

անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն, հացի պէս,

եւ Տիրոջ չեն աղօթեր:

Բայց յանկարծակի՝ Տէրը գիրենք ահ ու դողի պիտի մատնէ,

որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է:

ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈԹՔ

*Բարիքներ շնորհող, ամենուն հանդէպ առատաձեռն անմահ Տէր,
կ'աղաչենք, մեր հոգիներէն փարատէ՛ մշուշոտ եւ խաւարային խորհուրդները:*

*Բանասրկուին թելադրած պատրանքներէն հեռո՛ւ պահէ մեզ,
եւ շնորհէ՛ որ հաւատքով ապաւինինք ամենասուրբ Երրորդութեանդ՝*

Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին. այժմ եւ միշտ,

յաւիտեանէ մինչեւ յաւիտեան: Ամէն:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնայ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԲԹԸ

ԾՆՆԴՈՑ 6:1-8



ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՉԱՐՈՒԹԻՒՆ (6:1-8)

Այս գլուխը կարևոր է անոր համար, որ մեզի կը ներկայացնէ երկու սերունդներ՝ մարդու որդիներ եւ Աստուծոյ որդիներ: Նաեւ հսկայ եւ անուանի մարդիկ բացապրութիւնը:

Այս բացապրութեան լոյսին փակ կան հետեւեալ մօտեցումները.

1. Սէթի սերունդ եւ Կայէնի սերունդ: Այնքան արեւն որ խառնուած չէին Կայէնի սերունդի աղջիկներուն հետ, ճշմարիտ աստուածպաշտութեան մէջ էին: Երբ խառնուեցան, այսպէս ըսած, նոր սերունդ մը յառաջ եկաւ, որուն մէջ չարութիւն խառնուեցաւ: Գրեթէ աստուածպաշտութիւնը կորսուեցաւ, եւ Աստուած մարդկութեան չարութեան համար զանոնք պարժեց ջրհեղեղով:

2. Հին Րաբբիական մեկնաբանութեան համաձայն, մարդու որդիներ բացապրութիւնը նկարի կ'առնուի աշխարհի բնակիչները, իսկ Աստուծոյ որդիներ բացապրութիւնը՝ հրեշտակները, որոնք փեսնելով մարդու որդիներուն գեղեցկութիւնը, եկան եւ անոնց հետ ամուսնութիւն կնքեցին, եւ նոր սերունդ մը յառաջ եկաւ որպէս հսկայ եւ անուանի:

Որքանով քրամաբանական է այս մօտեցումը:

Աստուածաշունչը մեզի կը սորվեցնէ, որ հրեշտակները հոգեղէն էակներ են: Ուրեմն, հոգեղէն էակները չեն կրնար մարմնաւոր յարաբերութիւն ունենալ հոգեղէն էակներուն հետ: Ինչո՞ւ: Որովհետեւ ըստ Քրիստոսի բացապրութեանրոգիէն ծնածը հոգի է, մարմինէն ծնածը մարմին: Երկրորդ, երբ Քրիստոս կը խօսէր յարութեան մասին Մաղուկեցիներուն, շար յարակ բացապրեց ըսելով, «յարութենէն ետք մարդիկ պիտի նմանին հրեշտակներու, որոնք ”ոչ կին կ'առնեն եւ ոչ ալ այր մարդու կը քրուին” (Լուկ 20:27-40):

3. Հեթաբքքրականօրէն հսկայ բառը երբայերէն Նեֆիլիմ բառն է, որ նաեւ կը նշանակէ «անկեալ», ինկած: Ի միջի այլոց, այս բառէն մեկնելով է, որ Րաբբիական մեկնութիւնը կու գայ ըսելու թէ Աստուծոյ որդիներ բացապրութիւնը այդ ինկած հրեշտակներն են: Բայց այս բառին փակ պէտք է փեսնել բարոյապէս ինկած վիճակը: Այլ խօսքով, մարդիկ երբ սկսան օր ըստ օրէ աւելի չարանալ:

Ահա այս իսկ պարճառով Աստուած կ'որոշէ բնաջնջել մարդկութիւնը, որովհետեւ «մարդոց չարութիւնը երկրի վրայ կը շարնայ եւ անոնց սրտի խորհուրդներն ու գաղափարները չար են ամէն օր»: Ահա անոր կեանքին փարիները 120 փարի պիտի ըլլան: 120 փարին անհատ մարդո՞ւն փարիքի մասին է, թէ՛ Նոյի օրով ապրող մարդկութեան: Նոյի օրով ապրող մարդկութեան: Ուրեմն ջրհեղեղէն 120 փարիներ առաջ Աստուած Նոյին յայտնեց իր ծրագիրը, թէ մարդկութեան կը մնայ 120 փարի:

Ահա մարդկութեան չարացումը սկսած էր թափանցել մարդոց սրտերուն եւ խորհուրդներուն մէջ եւ դարձած էր բնական երեւոյթ: Միւս կողմէ նաեւ մարդուն մէջ չարիքը նաեւ մանկութենէն, եթէ ոչ նոյնիսկ ի ծնէ (Մաղ 51:5): Ահա այս երեւոյթն է որ կը կոչուի Ադամական մեղք, որ մեզի կը հասնի ժառանգականութեամբ: Ահա մկրտութեան ճամբով այդ մեղքը կը սրբուի, բայց քանի դեռ հոգեղէն ենք, փակաին այդ մեղք կոչուածը իր աշխարհները կը կարարէ, արոր համար ալ մնայուն կերպով մենք պէտք ունինք սրբուելու, ապաշխարութեան եւ խոստովանութեան:

«Անիկա մարմին է»: Բայց չէ որ գիտենք որ մարդը նաեւ հոգի է, ինչո՞ւ այդ մասին ակնարկութիւն չկայ: Այստեղ մարմին ըսելով կը նշանակէ մարդ: Միւս կողմէ նաեւ կը նշանակէ մտածողութեան կերպ մը, որ յարուկ է այս աշխարհին, որ կը մոռնայ զԱստուած, եւ աշխարհը կը բացապրէ զուր նիւթականօրէն: Ուրեմն, չարութիւնը մարդս կը վերածէ այնպիսի վիճակի, որ կը հեռանայ ճշմարիտ Աստուած ճանաչողութենէն եւ կը դառնայ զուր մարմնական: Ահա Աստուծոյ Հոգին մարդուն վրայ պիտի չմնայ ալ:

«Եւ Աստուած զոջաց մարդուն սրեղծելէն»: Ինչպէ՞ս կարելի է հասկնալ այս նախադասութիւնը: Արդեօք Աստուած կը զոջայ: Թուոց գիրքին մէջ կը կարդանք «Աստուած մարդ չէ, որ սուր խօսի, ոչ ալ մարդու որդի, որ զոջայ» (23:19): Զոջալ բայը իր ստուգաբանական հասկացողութեան մէջ կը նշանակէ մտածողութիւնը փոխել: Ուրեմն, կը նշանակէ թէ Աստուած մտածողութիւնը կը փոխէ: Եթէ աղպէս է, կարելի չէ Աստուած կոչել: Զոջալ նաեւ կը նշանակէ ցաւ զգալ: Աստուած փեսնելով մարդոց այսքան չարութիւնը, որուն հետեւանքը նաեւ կորսուր է, այս բոլորին համար ցաւ կը զգայ: Այս երեւոյթին դիմաց Աստուծոյ փրկութեան ծրագիրը աւելի եւս կը շեշտուի: Որովհետեւ սա ցոյց կու փայ Աստուծոյ հեթաբքքրութիւնը հանդէպ մարդուն:

Թէպէտ Աստուած պարիժ կը սահմանէ, բայց նաեւ փրկութեան օրինակը կու փայ երբ Նոյին կը թելադրէ որ Տապան մը շինէ: